

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՌԱԿԱՆԱՅ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Պր 5



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կար




ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ՀԱՆՔԻՏ  هانراكيداق  HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ  مجموع علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 5 || 1 ՓԵՏՐՈՒԱՐ 1903

Զ Ե Ր Օ



Կլորիկ եմ, լուսաւորի ծեւն ես ունիմ,
Ծոյլ աշակերտն է իմ միակ մտերիմ,
Մենք երկուորեակ եղբայրներու նմանինք,
Չե՛նք բաժնուիր, հետոյ դիտենք մենք երկինք :

Կլորիկ եմ, լուսնակի ծեւն ես ունիմ,
Աշխատողին սարսափ ազդող սեւ շիրիմ,
Ատելութեան եւ արցունքի եմ աղբիւր,
Աշակերտներն կուտան ինծի ժխոր բիւր :

Կլորիկ եմ, լճակի ծեւն ես ունիմ,
Զանասէրն է իմին միակ ռխերիմ,
Իմ ալիքներս անոր համար հոյն բըլխեն,
Դժոխքի չափ սոսկացնեմ զայն իմ ուղխէն :

Կլորիկ եմ, արեւու ծեւն ես ունիմ,
Ծոյլերու խումբն է իմ ընկեր հաւատարիմ,
Զանասէրներն իմ շողերէս կը փախչին,
Սատան կոչեն, իրենց ընկերն առաջին :

Կլորիկ եմ, աշխարհի ծեւն ես ունիմ,
Պսակ կ'ըլլամ զիս սիրողին մտերիմ
Անդունդի պէս անբնակելի վայր մըն եմ,
Հանճարի տէր թշնամիին ինծի դէմ :

Կլորիկ եմ, մարգարիտի ծեւն ունիմ,
Զիս կը գնեն դաստիարակէն ընկեր իմ,
Սարսափահար կ'ընեմ սիրտերը բոլոր,
Աշխատասէրն խոյս տայ ինէ անմոլոր :

ՄԻԹՐԱ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՁ

17. Լաւ բնաւորութիւն մը սիրելի կը դարձնէ

Ամէն վայրկեան ձեր ընկերներէն մէկուն համար կ'ըսէք. « Զանի շատ կը սիրեմ. ամէն մարդ զայն կը սիրէ, ա՛յնչափ լաւ բնաւորութիւն ունի »: Ուրեմն ի՞նչ է այն լաւ բնաւորութիւնը, որ ամէնէն կը սիրուի, ի՞նչ բանի մէջ կը կայանայ:

Այս գիտնալու համար ուսումնասիրէ Սիրանոյշ բարեկամիդ բնաւորութիւնը: Նա երբեք չտրտնջար: Ընկերներուն դէմ քսուած չի չընէր: Կատակներ կ'ընդունի եւ փոքր վիրաւորանքէ մը չի վշտանար: Միշտ զուարթ է, ո՛չ թէ երբեմն: Ուրախութեամբ կ'ընդունի ընկերներուն առաջարկած խաղը խաղալ: Իր փոքրիկ բարեկամներուն փափաքներուն չհակառակիր: Ո՛չ ոքի հետ կը վիճաբանի: Շատ անգամ տեղի կուտայ, թէպէտ եւ ինքն իրաւունք ունեցած ըլլայ, բայց այս կ'ընէ որ վիճաբանութիւնը չերկարի եւ կռիւի փոխուի:

Ամէն մարդ կը սիրէ Սիրանոյշն եւ զարմանալի ալ չէ: Ինքզինքը սիրցնելու գաղտնիքը՝ սիրալիր ըլլալն է, և Սիրանոյշ այնպէս է, որովհետեւ լաւ բնաւորութիւն ունի:

18. Լաւ բնաւորութիւն պիտի ունենաս, եթէ ուզես

Պզտիկ աղջիկ, եթէ կամիս, լաւ բնաւորութիւն կ'ունենաս: Քեզ կը կրկնեմ, միայն հաստատապէս պիտի կամիս եւ կամենալու համար ալ համոզուելու է որ լաւ բնաւորութիւնը քեզ մեծարելի, յարգելի կը դարձնէ:

Երբ խոժոռ ու տրտնջող ըլլաս, դժբախդ ես: Եթէ կատակէ մը բարկանաս, ցաւիս՝ վիշտ ունիս: Երբ յամառիս այս կամ այն խաղը խաղալու, քեզի մէկ կողմ կը թողուն եւ դուն կը ձանձրանաս:

Ուրեմն ամէն բանի մէջ լաւ բնաւորութիւն, ուրախ և ժպտուն կերպարանք, սիրալիր ու համակերպող ըլլալով՝ չահաւոր կ'ելլաս: Լաւ բնաւորութենէդ առաջ եկած բոլոր առաւելութիւններէն պիտի օգտուիս: Ասկէ զատ քովիներուդ հաճոյք, ուրախութիւն պատճառելու գոհունակութիւնը պիտի ունենաս: Ասոր համար միայն պէտք է կամենաս: Բարի ըլլալ գիտցիր:

19. Հպարտութիւն մը

— Վարդուհի՛, ըսաւ քաղցրութեամբ մը վարժուհին, ուղղա-
գրութեան սխալ մը ըրած ես:

— Ո՛չ, օրիորդ, կը պատասխանէ Վարդուհի կարմրելով, սը-
խալած չեմ: Գրքի մը մէջ այնպէս կարդացեր եմ:

— Վարդուհի՛, կը կրկնէ վարժուհին, այդպէս չես կարդացած:
Բայց դու հպարտ ես, չես ուզեր անիրաւ ելլել և կը յամառիս:

— Ո՛չ, օրիորդ, չեմ յամառիր, վստահ եմ, որ այսպէս գըր-
ուած էր:

Վարժուհին համբերող է: Բան մը չըսեր, բայց կ'երթայ յիշ-
ուած գիրքը կը բերէ եւ փոքրիկ աղջկան կը ցուցնէ, որ սխա-
լած է: Այն ատեն Վարդուհի գլուխը կը կախէ խիստ ամօթապարտ,
իբրեւ թէ շատ մեծ պակասութիւն է սխալած ըլլալը:

Ո՛չ պակասութիւն չէ սխալիլը, բայց հպարտութեամբ յամա-
ռիլն անսխալ գործ մ'է, երբ չեն ուզեր անիրաւ ըլլալը խոստո-
վանիլ: Վարդուհին ուսման մէջ յառաջագիմութիւն պիտի չընէ,
որովհետեւ հպարտ է, իբր թէ ամէն բան գիտէ, արժանի չսեպեր
ըսուածները լսել: Հպարտութիւնը որ կ'արգիլէ մեզի ճանչնալ ինչ
որ ենք, մեր ամէնէն գէշ թշնամին է:

20. Սայլի մը ամենագեշ անիւր

Մեծ ճանապարհէն սայլ մը կ'անցնի: Ի՛նչ աղմուկ կ'ընէ: Տես-
նենք ի՞նչ է: Կը մօտենան կը նային: Անիւներէն մէկը խիստ լաւ
է եւ իր պաշտօնը լաւ կը կատարէ, անձայն կը դառնայ եւ ոչ
մէկուն ուշադրութիւնը կը գրաւէ: Միւսը բան մը չարժէր, շըր-
ջանակի մասերը կը տատանին եւ երկաթէ շրջանակը որ բոլոր
մասերը կը պաշտպանէ այլ եւս հաստատուն չէ: Այս է որ այն-
չափ ուժով կը ճրճոյ եւ այնչափ աղմուկ կը հանէ, ու ամէնուն
ուշադրութիւնը իրեն կը դարձնէ:

Այսպէս է անապարժութիւնը: Դասարանին մէջ լաւ, ամէնա-
լաւ աշակերտները չեն որ աղմուկով կը լեցնեն: Շատ անգամ կը
լռեն, միայն հարցուած ժամանակ կը խօսին: չեն փափաքիր միշտ
ամէն բանի մէջ իրաւունք ունենալ: Խիստ բարի են ու իրենց փոքր
արժանիքները աղմուկով չեն ծանուցաներ: Գիտեն անշուշտ, որ
անապարժութիւնը անմոռութեան կը տանի մարդն:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ՆԱԻԱՊԵՏԻՆ ՄԱՏԱՆԻՆ

Յիսուն տարի առաջ Ք. քաղաքին ծովեզերքին մօտերը անծանօթ նաւ մը ընկղմեցաւ։ Տասնի չափ դիակներ ցամաք ինկան, ասոնց ի՛նչ կրօնքի պատկանիլը յայտնի չըլլալով, աւազին մէջ՝ իրենց գտնուած տեղը թաղեցին։ Այս մեռեալներուն մէջ գեղեցիկ ու յուժկու երիտասարդի մը մարմինն ալ կար, որ միւսներէն աւելի խնամով հագուած էր եւ մատնեմատին վրայ ալ ոսկի խոշոր մատանի մը կը կրէր։ Ամէն մարդ կարծեց թէ նաւապետը ըլլալու է այն։

Ք. քաղաքի բնակիչները բարի ու պատուաւոր մարդիկներ են. երիտասարդին մարմինը աւազին տակ թաղեցին առանց մատանին առնելու մատէն։

Ասոր վրայ տարիներ անցան։ Նաւաբեկութեան յիշատակը կտմայ կտմայ կը սրբուէր ամէնուն յիշողութենէն, միայն, երբեմն, ձկնորսի կիներ իրիկուան վերջալոյսին ծովեզերքին վրայ իրենց ամուսինին սպասած ատենին խօսքը կը դարձնէին « անծանօթ նաւապետին » ու անոր մասը մնացած խոշոր ոսկիէ մատանիին վրայ։

Առաջին անգամ, երբ Մօն Բարաթօն, կար կարող աղջիկ մը, իմացաւ այս պատմութիւնը, ամբողջ գիշերը ոսկիէ մատանին երազեց. որու վրայ ձկնորսի կիները սքանչանալով կը խօսէին։ Յաջորդ օրը բնաւ մտքէն չելաւ, եւ միւս օրերը միշտ կը մտածէր թաղուած ոսկիին վրայ։ Ամէն դերձակուհիի պէս ինք ալ հագուիլ սգուիլը կը սիրէր եւ իր խելքով ոսկեզէն զարդ մը ամէնուն աչքին փայլելու էր եւ չէ թէ հողին տակ մութին մէջ թաղուելու։

Փորձութիւնը երկար չտեւեց։ Իրիկուն մը, օրական աշխատութիւնը աւարտելէ ետքը, տուն դառնալու համար դուրս ելաւ՝ յետոյ, երբ ապահով եղաւ որ մէկը չտեսներ գինքը, անշուկ քայլերով ծովեզերք իջաւ։ Նաւաբեկներու գերեզմանին տեղը յայտնանշուած էր փայտէ սեւ ու կոշտ խաչով մը, որ « նաւապետին » ճիշդ գլխուն վերեւ տնկուած էր։

Գիշերը արդէն յառաջացած էր, բոլոր ձկնորսները տուն դարձած էին եւ Մօն Բարաթօն վախ չունէր թէ մէկը վրայ կը հասնի։ Ծունգի եկաւ եւ սկսաւ մոլեգին աւազը փորել մատներովը։ Դիչ յետոյ մեռեալին մէկ ձեռքը երեւան եկաւ, ձախ ձեռքն էր. մատանին ալ մատնեմատին վրայ կը փայլէր։ Աղջիկը ուզեց մատէն քաշել հանել անիկա, բայց մորթը կարծրանալով

օղակներ ձեւացուցած էր որոնք մօտիկ ծովուն աղի ջուրին ազդեցութեան տակ քարացած՝ չէին թողուր որ ոսկիէ վարդը խըլուի կրողին ձեռքէն :

Մօն Բարաթօն փորձեց մկրատով կտրել զայն, բայց անօգուտ . ի վերջոյ , անհամբերութեամբ մը մեռեալին մատը ուժգին մը ուրեց որ չոր ճաթիւնով մը կոտրեցաւ : Մատանին ելած էր : Աղջիկը շուտ մը նորէն թաղեց ձեռքը եւ վրան աւազով ծածկեց :

Յաջորդ օրը սովորականին պէս գործին եկաւ , բայց շատ տփգունած էր :

— Ի՞նչ եղար , Մօնա , հարցուց տիրուհին :

— Ոչի՛նչ , քիչ մը զուխս կը ցաւի , բայց բան մը չէ : Եւ սկսաւ կարել : Հազիւ քչիկ մը ատեն աղջիկը կրցաւ շարունակել աշխատութիւնը , ցաւը կ'աւելնար , ձգեց գործը եւ դուրս ելաւ հեծկլտալով : Հազիւ փողոցին անկիւնը դարձեր էր , իրարանցում մը լսեց գիւղին մէջ : Մովեզերքը խաղացող ստահակներ իրենց ընկերներուն կը պօռային :

— Եկու՛ր տես , ի՛նչ կայ նաւապետին գերեզմանին վրայ :

Բոլոր գիւղացիները , կին , այր , տղայ , այս ձայներուն կողմը վազեցին և ահա՛ ինչ որ տեսան : Սեւ խաչին ստորոտը , թեւ մը դուրս ցցուած էր աւազին մէջէն . ձեռքին բոլոր մատները կրծկուած էին բացի մէկ հատէն՝ մատնեմատէն , որ սպաւնալից , կարծես մէկը կը ցուցնէր :

Հոն հասնող կիներէն մին ըսաւ :

— Մատնեմատն է այս . մատանին գողցեր են , այն կը պահանջէ :

— Ի՛նչ և է , պատասխանեց մարդուն մէկը , հողին մէջը թաղենք այս ձեռքը :

Եւ վրան աւազ լեցնելով ծածկեց զայն :

Յետոյ ամէն մարդ իր գործին դարձաւ :

Երբ իրիկուան ընտանիքները հաւաքուեցան խրճիթներուն մէջ , ամէնքն ալ կ'ըսէին թէ սրբապղծութիւն մը կատարուած է :

Առտուն , քանի մը հետաքրքիրներ վազեցին գերեզմանին տեղը տեսնելու թէ ի՛նչ եղեր է . նորէն վրէժխնդիր մատը կը ցցուէր հարթ աւազին վրայ :

— Նայինք վերջը ի՛նչ պիտի ըլլայ :

Ըսին եւ նորէն ձեռքը ծածկեցին . դացին խոշոր քարի կը տորներ բերին ու վրան դիզեցին :

Երկու ժամ ետքը ձեռքը նորէն դուրս կը ցցուէր . քարերը

կարծես ինքնիրեննուն կը հեռանային եւ բազուկին բոլորտիքը շրջանակ մը կը կազմէին :

— Իր մատանին կ'ուզէ , ըսաւ առաջին անգամ այսպէս խօսող կինը :

Հիմա , ամէնքն ալ իրեն պէս կը խորհէին , բայց ո՞րը գտնել մատանին , որո՞ւն քովը փնտռել :

Այս միջոցին աւազուտ ճամբուն վրայ , որ քաղաքէն ծովեզերք կ'իջնայ , տեսնուեցաւ Մօնա Բարաթօն , կամ աւելի ճիշդը , հեռուէն զինքը ճանչցան հազուատներուն ձեւէն , թշուառը ամէն մէկ քայլին կը հեծեծէր եւ լաթերու մէջ փաթթած ահագին ծըրար մը՝ իր ձախ ձեռքը , ցաւագին ոյժով մը կուրծքին վրայ կը բռնէր :

Երբ խումբին քովը հասաւ , շարժումով մը խնդրեց որ թող տան իրեն աւաջ անցնելու : Առողջ ձեռքովը՝ ցուցամատին ու բթամատին մէջտեղ խոշոր ոսկիէ մատանի մը բռնած էր . . . մընացեալը կը գուշակէք . . . :

Ձկնորսները ուղեցին Մօն Բարաթօնի « լաւ դաս մը » տալ , բայց նէ բացաւ իր կապուած ձեռքը՝ որ ուռելով ահագին տիկի մը ձեւը առած էր եւ որու մատնեմատը սեւցած ու անշարժ՝ հսկայ դիակի մը մատին կը նմանէր :

Բոլոր գիւղացիները փախան քովէն եւ ալ ևս բնաւ չմօտեցան իրեն , ինչպէս պիտի ընէին բորոտի մը համար : . . .

Թարգմ .

Զ . Ն . Պ .



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐ⁽¹⁾

ԱՐԻՍՏԱՆԷՍ Յ. ՊՈՅԱՃԵԱՆ

Պատմութիւնն ալ իր կարգին , գոնէ տարրական կրթութեան մէջ , յայտնատեսիկ մեթոտին հարկ տալու է , ուրիշ խօսքով , այդ մեթոտին կիրարկումը ըլլալու է : Պատկերը՝ պատմական դէպքերուն ու տեսարաններուն մէջ կեանք կուտայ եւ անոնց նկարագիրը դուրս կը ցատքեցնէ : Ինչպէս որ հէքեաթ մը տղոցը ուշադրութիւնը կը խանդավառէ , նոյն տպաւորութիւնը կը թողու պատկերը պատմութեան մէջ , պատմական յիշատակները կը զօրացնէ :

(1) Շարունակութիւն 4 թիւէն

Եւ այսօր տարրական կրթութեան վերաբերող բոլոր գիրքերն ալ պատկերազարդ են :

Ասկէ աւելին ալ ըրած , օրինակի համար , պատմութեան ուսուցումին համար գունաւոր տախտակներ , քարտէսներ , պատմական իրողութիւններու , դէպքերու տեսարաններ , մեծ մարդոց պատկերներ պատրաստած են , որուն վրայ պիտի կրթնի ուսուցիչը պատմութեան դասը տուած ատեն , և աշակերտներուն ուշադրութիւնը անոնց վրայ հրաւիրէ :

Այս կերպ ուսուցումը իր փայլովը եւ միւս կողմանէ պատկերներով ուսուցումը ամէնէն աւելի հրապուրիչ եղանակն է , թէպէտեւ դպրոցական ուսուցման մէջ միշտ գործնականապէս չի գործադրուիր , սակայն ընդհանուր ժողովրդական բանախօսութեանց յաջողութեանց մէջ շատ նպաստած է :

Մինչեւ հոս միմիայն աշխարհագրութեան և պատմութեան վրայ խօսեցանք , բայց իրագիտութեան դասերը , ուր դարձեալ վերոյիշեալ մեթոտը դասին նիւթերը կը ցուցնէ , տարրական թուարանութիւնը որ կը պահանջէ թուագնդակներու (boulier) և փայտիկներու գործածութիւնը , որովհետեւ ասոնք են որ քանակութիւններու և անոնց համեմատութիւններու վրայ շօշափելի եւ որոշ գաղափար մը կազմել կուտան տղոց : Նոյնպէս տարրական միւս բոլոր ճիւղերը այլեւայլ չափերով յայտնատեսիկ մեթոտէն օգտուելու են :

4. — Այսպէս յայտնատեսութիւնը , և մասնաւորապէս զգայական յայտնատեսութիւնը (ինչու որ մանկավարժութեան մէջ բո՛ւն յայտնատեսութիւնը ան կը ցուցնէ) , և զգայական յայտնատեսութեամբ իրերուն ուղղակի և անմիջական ծանօթութիւնը կը կազմենք մեր զգայարաններուն միջոցաւ : Բայց մէկ կողմէն , մեր ծանօթութիւններուն մեծ մասը յանկարծ չենք կրնար մտքի առաջին տեսութեամբ ստանալ , այլ աստիճանաբար և քայլ առ քայլ կրնանք ամբարել : Յայտնատեսութիւնը այս պարագային մէջ միջոց մըն է իրերուն տեղեկութեանը , ծանօթութեանը ներքնամուտ ըլլալու , անիկա կը ծառայէ այդ տեղեկութիւնները ամբողջացնող և մեկնող հրահանգներու , վարժութեանց չուկէտը կամ խարխիւը ըլլալ (իրագիտութեան դասերը ըսել կ'ուզեմ) : Միւս կողմէ , ամէն ուսուցում թանձրացեալ առարկայի մը , պատկերի մը կամ մարմինի մը ներկայացմանը վրայ միայն կրթնելով չբաւեր , պէտք է նաեւ այդ պատկերները մեկնել , բացատրել գործնականապէս : Երկու պարագային մէջ ալ մանկավարժական ուրիշ միջոցներու դիմել , ուրիշ մեթոտներ գտնելու է , որուն յայտնատեսութենէն անկախ ըլլան եւ ուրիշներ ալ անոր կրթնած ըլլան :

Օրինակի համար, պատմութեան կամ աշխարհագրութեան դասի ատեն բաւականանալու է միմիայն պատմելով կամ նկարագրելով, այս պարագային մէջ գործածուած մեթոտին առաջադրական մեթոտ կ'ըսեն:

Բաւական կրնայ համարուիլ միմիայն նկարագրելով կամ պատմելով, ինչպէս կ'ընեն պատմութեան և աշխարհագրութեան մէջ. հոս, գաղափարները կերպով մը յարադրուած կ'ըլլան. ուսուցիչը կը բացատրէ զանոնք, տղաքը կը հասկնան եւ մտքերնին կը պահեն:

Յայտնի է թէ դասը պէտք է որ որոշ և յստակ բառերով բացատրուած ըլլայ, որպէսզի տղոցը մտքին մէջ մութ բան մը չի մնայ (այս պայմանը արդէն միշտ ընդունուած է ուսուցման մէջ). Ասկէ զատ, հոս ալ ծանօթութիւնները իրարու յաջորդելու են, առանց իրարմէ ստորադասուելու, ճգրիտ կարգով մը ներկայացուած ըլլալու են, անկէ առաջ պիտի գայ ամբողջին յստակութիւնը. կարեւորագոյն մասերուն համար աւելի լայն բացատրութիւններ տրուելու են. իսկ եթէ զանցառութեան մասեր կան, ուսուցիչը պէտք է առաջուց (որովհետեւ այնպէս կ'ենթադրենք թէ դասաւանդելիքը կը պատրաստէ) արդէն որոշած կ'ըլլայ ատոնք չխօսիլ:

Ուսանելը՝ ընտել է ըսած ենք արդէն. արդ, դասի մը պատրաստութիւնը այս տեսակէտով խորունկ չափանիշ մըն է:

Քանի որ ամէն բան կարելի չէ ըսել, ո՛ր կանգ առնելու է, ի՞նչ պակեցնելու է և ո՞ր մասին վրայ աւելի ծանրանալու է. հոս, ուսուցչին դատողութիւնը եւ անոր մանկավարժական ուղղութիւնը միակ առաջնորդներն են, որոնց պիտի դիմէ ան:

Հաւանական է որ յաճախ ուսուցիչը չփութութիւններու եւ վարանումներու մէջ կ'իյնայ. այդ պարագային աւելի գէշ հետեւանքի կ'ենթարկուի, երբ բաւականանայ պարզ ակնարկութեամբ մը անցնիլ այն մասին վրայէն, որ իր աչքին դժուար կամ խիստ մասնակի կը թուի, կամ բուն նիւթէն քիչ մը դուրս կ'իյնայ: Ասիկա այնչափ սխալ միջոց մըն է, որուն հետ կարելի չէ երբեք ու եւ կերպով հաշտուիլ: Արդարեւ, ակնարկութիւն մը անհասկնալի կը մնայ, նախ անոր համար որ, գործը այնպիսիներու հետ է որոնք արդէն բաւական մշակուած միտք մը ունին, և թէ անոնք արդէն կատարելապէս տիրացած են առաջադրուած նիւթին կամ իրողութեան: Հակառակ պարագային, ակնարկութիւնը, որ արդէն գրական եղանակ մըն է եւ խիստ քիչ մանկավարժական, աշակերտներուն աչքին անտես կը նկատուի, և կամ ինչ որ աւելի ծանր ու քննադատելի է, ան է որ չփութութիւն առաջ պի-

տի բերէ աւելի ուշիմներուն մտքին մէջ, անոնց՝ որոնք կ'ուզեն ամէն բան հասկնալ և մթութիւն չեն սիրեր: Գաղափարներու նմանօրինակ կարգի մը մէջ, կը հրաւիրենք ուսուցիչը կարելի եղածին չափ մասնաւոր առաջարկներով դասաւանդել: Զգուշանալ միջադէպերէ, մանաւանդ առաջին անգամ ըլլալով յայտնուած գաղափարի մը պատկանելու յատկութիւնը ունին: Երբ տակաւին Սուրբ Սահակին մահուան թուականը չէք ըսած, (դարձեալ զգուշանալու է պարապ տեղը կրկնել), այդ կերպով մի բացատրէք, այլ ըսէք. « Ս. Սահակ Մեծ 439ին հանգեաւ և իրեն յաջորդ թուոց Ս. Յովսէփ, 440ին »:

Բերանացի դասի մը իմաստուն և յստակ ըլլալու կարեւորութիւնը, կախում ունի նաեւ կարգ մը յատկութիւններէ և ստացական տուրքերէ:

Կը մաղթենք որ ուսուցիչը ունենայ հնչուն և որոշ լեզու մը, չափաւոր բայց ճիշդ և արտայայտիչ շարժումներ, բաւական վառվռուն դէմք մը ունենայ, որ կարենայ, առանց ճամարտակութեան մէջ իյնալու, դասաւանդած նիւթին ամուր կապուած մնալ: Մանաւանդ կ'ուզենք որ ան վայելուչ և հեշտ խօսուածք մը ունենայ, այն համոզուած ու խանդավառ շեշտը որ մտքերը թափանցելու և յափշտակելու գաղտնիքը գիտէ:

ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՆ ՔԻՅ ԵՒ ԻՐ ՔԵՐԹՈՒԱՄՆԵՐԸ

1795—1821

(Շարունակութիւն 4րդ թիւէն)

Լէյկ Հընդի քինախնդիր գրագէտներու հոյլ մը, որ հանդէսի մը մէջ կը գրէր եւ որոնց կարգէն էր նաեւ Վ. Սքոթ, 1818 Օգոստոսին անհնարին կատաղութեամբ յարձակեցաւ Լէյկ Հընդի սիրական աշակերտին վրայ: Այդ հանդէսին մէջ հրատարակուած յօդուածը, զոր քննադատներէն ոմանք Վ. Սքոթի ապագայ փեսային՝ Լօքարդի կը վերագրեն, յամենայն դէպս յայտնի վրէժխնդրութեան մը ժահահոտ թոյնին ժայթքումն է եւ ո՛չ թէ գրական համեմատական ուսումնասիրութիւն մը: Մէկ խօսքով,

եթէ Բից՝ Լէյկ Հընդի դպրոցին չվերաբերէր, զոչ չէր երթար Վ. Սքոթի կուսակիցներուն։ Ահա՛, մէջ ընկնէ այն գրականութեան անունին տակ ճանչցուած կոչաութիւններէն մաս մը, որուն իւրաքանչիւր բառը թոյնի ծորակ մըն է Բիցի դէմ՝. « Աւելի լաւ էր սովալլուկ դեղագործ մը ըլլալ քան թէ սովամահ բանաստեղծ մը. այսպէս ուրեմն դարձէք ձեր խանութը, Պարոն ձօն (՝), դարձէք ձեր բուժակտաններուն, ձեր օծիւղերուն. բայց, յանուն երկինքի երիտասարդ Սակրատո. քիչ մը խնայող եղէք, ձեր արհեստին մէջ, թմրեցուցիչ նիւթերուն, բան մը զոր դուք չէք եղած ձեր ոտանաւորներուն մէջ (՝) »։ Որպէս թէ այս կնամ ու կծու անարգանքները չէին բաւեր, հետեւեալ ամսուն ուրիշ հանգէսի մը մէջ նոյն օրինակ գրուածք մը հրատարակուեցաւ. « Եթէ մէկը ունենայ քաջութիւնը այդ բանաստեղծական կեղծիքը գնելու և համբերութիւնը (զոր մեք չունեցանք) առաջին գրքին ծայրը հասնելու և երջանկութիւնը (զոր մենք երբեք չունեցանք) անոր մէջ իմաստ մը գտնելու, կ'իմացնենք թէ չպիտի ուրանանք այդ յաջողութիւնը »։

Այս հաստոյր հարուածները սկսնակ քերթողին սրտին վրայ կայծակի տարափի մը պէս թափեցան եւ վերիվայր շրջեցին այն արտաքսիչ եսը, որուն մէջ կեանքի ու բանաստեղծութեան երկւորեակ արշալոյսները փողփողիլ սկսած էին որով էնթիմիոնը իբր անդրանիկ ցոլք ճառագայթելով պիտի խաւարէին։ Այս գրական պայքարին մէջ Բիցի բարեկամներն ալ իրեն հետ խորապէս խոցուեցան, որովհետեւ զգայուն սրտերու համար ազդու եւ յաւէտ անիրաւ արհամարհանքներն մահէն աւելի ծանր են, հոգեբանական ահարկու երեւոյթ մը կամ աւելի ճիշդ խօսելու համար ըսենք տանջանք մը, որուն ծանրութենէն գերեզմանները ինքնին կը փոքուին, -- Թէեւ Բիցի մահուան պատճառը թուքախտը ըլլար։ Այս մահաբեր փոթորիկէն գլխից երեք տարի ետք, հէք բանաստեղծը մեռաւ Հոուի մէջ։ Շէլլի, անոր մտերիմը՝ Պայրըն եւ ուրիշներ անոր մահը վերագրեցին առաջին բանաստեղծութեան եղած գազանային ընդունելութեան։ Շէլլի՝ ճշմարտութեան եւ հետեւաբար բնութեան սկեպտիկ մարգարէն, Բիցի յիշատակին նուիրեց Ադոնիս, որ գերազանցապէս զգայուն սրտի մը յայտնութիւնն էր. երիտասարդութեան լրութեանը մէջ հնձուած Բիցի ձօնուած։ Այդ հրաշակերտին մէջ յաւիտենապէս վատանուն կը հռչակէ անոր քննադատները։ Իսկ Պայրն, կը հաստատէ այս առասպելակարկատ գրոյցը, ըստ որում՝ հանգէսի մը մէկ յօդուածին կը վերագրէ անոր մահը, որ քառորդ դար քննադատներուն հասարակաց տեղիքը եղաւ, մինչեւ որ Բիցի նամակները հրատար-

րակուելով բուն ճշմարտութիւնը լոյս աշխարհ եկաւ։ Այդ տողերը Քիցի ծաղրանքը կը հիւսէին քան թէ իր անիրաւ քննադատներունը։ Մայրալիը երիտասարդութեան մէջ երգող բանաստեղծը առաջին քայլը դեռ գրականութեան հողին վրայ չդրած այս երկունքին մէջ ձգեցին, կրկին երկունք մըն էր այն, դեռ քանի որ հրաշակերտ մը ծնելու յոյսովն ալ յղի էր իր արգանդող միտքը։ Հանդէսներու քննադատութիւնները չէին որ իր մահուան պատճառ եղան, այլ իր անխուսափելի հիւանդութիւնը, որ ճակատագրական օրէնքով մը, երիտասարդ հանճարներու բաժինն է եղած կարծես։ Քից՝ վշտահար քերթողը՝ իր մասին կը գրէ. «Այն քննադատութիւնները զորս ես ինծի կ'ընեմ, անհամեմատ կերպով չարիք հասուցին ինծի քան հանդէսներու քննադատութիւնները։ Ժամանակի խնդիր մըն է այն, ես կը հաւատամ թէ մահէս վերջ անգլիացի բանաստեղծներուն միջեւ պիտի դասուիմ»։ Այս արմատական համոզումով ինքզինքը կը մխիթարէր, չընկըրկելու համար արտաքին նախատինքներու առջեւ, թէ եւ նախապէս գրականութենէն իսպառ հրաժարելու հակամիտութիւնը ցոյց տուաւ, բայց ինչպէս կ'երաշխաւորեն այս տողերը, աւելի՛ աշխոյժով փարեցաւ իր մոռային, որ էր նոյն ինքն Գեղեցկութիւնը։

Գ.

Քիցի զգայնութիւնը. — Անգլիական գրականութեան պատմութեան մէջ զգայնութեան լրութիւնն է Քիցի սիրտը, որ հիւլէէն առ մինչեւ հսկայ համաստեղութիւնները կը սրանայ ու երբեմնակի անոնց մէջ կը ձուլուի, անհունութեան դաշն ձայները լսելու ըղձանքով։ Բանաստեղծական կեանքի բովանդակութիւնը իր անթարչամ նուազներէն դուրս կը ծորի, յաւերժահարսի մը լոյս ստինքներէն կաթող կաթին պէս։ Եթէ Շէքսպիր տռամն է, ինչպէս կ'ըսէ Վ. Հիւկօ, Քիցն ալ զգայնութիւնն է. մէկը գաղափարն է, միւսը զգացումը, որ բանաստեղծութեան խմորն է. անո՛վ է որ բնութիւնը կը ձուլուի մեծ բանաստեղծներու եսին մէջ եւ կամեսը բնութեան ծոցը։ — Քից իր նամակներէն մէկուն մէջ կը պոռայ. «Ա՛հ, ո՛վ պիտի տայ ինծի զգայնութիւններու կեանքը, զոր լաւագոյն կը սեպեմ գաղափարներու կեանքէն»։ Զգայուն էութեան մը բացագանչութիւնն է այն, որ դիւթական հոյելիի մը պէս կը ցոլացնէ Քիցի ներքնաշխարհը, որ բնութեան բազմերանգ գեղեցկութեանց շտեմարանն է։ Զգայարմններու բանաստեղծին ստեղծագործելու աստուածային զօրութիւնը տալու համար, բաւ է որ գինի են, երաժշտութիւնը, գեղեցիկ օդը, գիրքերը եւ կամ նոյն

իսկ քաղցրաճաշակ պտուղ մը զրգռէին զգայարանքը, ինչ որ կը շնչառուի Գիցի հետեւեալ խոստովանութեանը մէջ. « Թո՛ղ ինծի տան գիրքեր, պտուղներ, ֆրանսական գինի, գեղեցիկ օդ մը, դաշտին մէջ քիչ մը երաժշտութիւն, որ նուագուի անծանօթ երաժշտէ մը, եւ ես իր ժամանակը ամառն իրուն խաղաղիկ անցնող մարդ մը կ'ըլլամ » :

Ճօն Րըսքինէն առաջ գեղեցկութեան կրօնքը կը քարոզէր Անակրէոնի մը մշտագալար հեշտութեամբ, (որովհետեւ Անակրէոն խոր ծերութեան մէջ իսկ աղջիկներն ու գինին երգեց) : Գոյներու, բոյրերու եւ ձայներու երգիչը եղաւ Գից, որուն կեանքը գոյնի մը պէս պիտի ջնջուէր, բոյսի մը պէս պիտի անջնէր եւ ձայնի մը պէս պիտի լռէր Հռոմի մէջ : Սոխակիւն ուղղուած տաղին մէջ, զարմանալի զգայնութեան մը թալկացող ելեքրականութիւնը ինքնաբերաբար կը զգացուի : « Ո՛հ, ո՞վ պիտի տայ ինծի ունայ մը գինի — երկար ժամանակ գետնի խորութեանց մէջ պաղած, — գինի մը որ Փլորա եւ կանանչ դաշտ կը փուրէ — պար եւ գաւառական երգեր եւ այն ուրախութիւնը, զոր արեւը կը հրահրէ : — Ո՛հ, ո՞վ պիտի տայ ինծի ջերմ հարաւով գեղուն » : Զգացումի այս նորանշան յայտնութիւնը, գեղեցիկ դաշտանկարի մը, լուսնի եւ կամ արեւու շողի մը առջին, ա՛յլ ինքզինքը չէր կրնար բռնել, Ճօն Գից, գեղագործի աշկերտը չէր, այլ անընդ եզեկիէլ մը, որուն շուրջ անուահոլով անհունութիւն մը կը թաւալի : Շատ չը խօսող Գիցը, դաշտ ելած պահուն գինով մարդ կը դառնար, եթէ պէտք է Հայտըն նկարչին հաւատալ՝ մեղուի մը բզկունը, ծաղկի մը տեսքը, արեւու վէտ վէտ ցոլացումը դող կը հանէին իր էութիւնը, աչքերը կը փայլէին, երեսը կը վառէր, շրթունքները կը սարսափէին : Կը սիրէր հեռանալ քաղաքի ժխորէն ու երթալ դաշտի խիտ առ խիտ դիզուած խոտերուն վրայ պառկելով կարդալ « Սիրոյ, բարեքիկ կամ խելօքիկ քաղցր պատմութիւն մը » : Կը սիրէր երկինքի վրայ կոհակող ամպերուն վրայ նայիլ, եւ այսպիսի երջանիկ օր մը սահելուն՝ կ'ըսէր. « Հրեշտակի մը արցունքին պէս, որ լուսաւոր եթերին մէջ կ'իյնայ լռիկ » : Երկրաւոր բանաստեղծութեամբ վառուած կ'ըսէր, « Երկրի բանաստեղծութիւնը երբեք մեռած չէ » : Գեղեցիկ ու ներդաշնակ քերթուածի մը ընթերցումէն այնքան կը յուզուէր որ կուլար : Երբ առաջին անգամ կարդաց Տանթէի « Ստուածային կատակերգութիւն » ին մէջ Բաօլոյի ու Ֆրանչէսքոյի վրայ հիստուած դրուագը, յանկարծ երազամոյն կ'ըլլայ : յետոյ իր մտքին մէջ խանձարուրուած երազը սապէս կը պատկերէ. « Կեանքիս ամէնէն կենդանի հզօր հաճոյքներէն մէկը եղաւ : Մըրկայոյզ ոլորտին մէջ կը տարուբերէի, ինչ-

պէս ըստած է քերթուածին մէջ ալ, գեղեցիկ էակի մը հետ, որուն շրթունքները իմիններուն կցուած էին, որպէս զի ինծի դար մը թուէր, եւ այս ցուրտին ու աղշամուղլին մէջ տաքնայի, յաւիտենապէս ծաղկած ծառեր կը բարձրանային եւ մենք անոնց վրայ կը հանգչէինք ամպի մը թեթեւութեամբ, մինչեւ որ հովը մեզ ուրիշ տեղ վարեց: Ո՛հ, իցի՛ւ թէ բոլոր գիշերներս այսպէս երազէի»։ Երեւակայութեան աստուածային արագութիւն ունեցող թռչնները զինքը կը քչէին դէպի անկէտ ընազանցութիւն մը, որ զգացումներու աշխարհ — սրտին տեղափոխումն առաջ կուգար, ինչ որ Քիցի մէջ երեւցաւ: Ինք իր նիւթը կ'երազացնէր քան ինք նիւթ կ'ըլլար: Իր քով ամէն բուն զգացում վայրկենական էր, երբ ներշնչումը, այդ մարգարէական ոգին, որ երկար սպասել չի գիտեր, անհետէր, իր երազն ալ կ'անհետէր սրտի մռայլին տակ, ցողաթուրմ ածինի մը հանգոյն: Սակայն հիւանդագին երեւոյթներէ զերծ չէր իր հոգին, ճշմարտութիւն մը, զոր ինք այսպէս կ'ուրուագէր. « Ստուգիւ, ես սարսափելի կերպով հիւանդոտ խառնուածք մը ունիմ. հո՛ղ է, անտարակոյս քար գայթակղութեանը, որմէ կը վախնամ»։ Իր երեւակայութիւնը ամէն ատեն չէր երկներ, եւ տակաւ քնարի լարի մը պէս կը թուլնար. պէտք է լարել զայն: Ո՛ր եւ է արգելք իր մէջ կ'արթնցնէր կատաղի բարկութիւն մը « Սոփոկլէսի մը ողբերգութեան արժանի », իր իսկ բացատրութեամբ. խոնջ միտքը զանի դէպ ի յոռետեսութիւն եւ դէպ ի մարդատեցութիւն կը վարէր: Այս դժիւսմ բնաշրջումը կը բացատրէ հետեւեալ կերպով « Անցուցի կեանքս, կ'ըսէր, կասկածելով բոլոր մարդոցմէ »։ Բընութեան առջեւ յափշտակութեան կենդանացումն հանդիսացող Քից, աւանդավիպական աստուածութեան մը պէս ամպերու տակ կը ծածկուէր շտեմնելու համար մարդկութիւնը: Այս սեւեռամբ տաժումով իր մէջ ցոյց կուտար միշտ ցաւագին բան մը, որ իրեն թալուկ կը պատճառէր: Այս միջին ներքնահայեցողութեան ծագումը, անբաղդատելի զգայնութեան մէջ պէտք է փնտռել Գեղեցիկին համար ունեցած ճաշակը, թերեւս ընթինն ալ հիացրնէր: Գեղեցիկութիւնն իրեն կրօնք դաւանելու գաղափարը զանի զգացման հրացայտ աղբիւրը ըրաւ, աղբիւր մը՝ որ Շէլլին ալ զարմացուց:

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

Ի՞նչ է անօթութիւնը. — Պատրանքներ. — Անուշի պատմութիւն մը. —

Անօթութիւնն իբր ջլախո

Անօթութիւնը, կ'ըսէ Հանրի տը Վարինի, զարմանալի պէտք մ'է զոր կարելի չէ որոշապէս սահմանել: Զգային նկարագիր մը ունի, այսինքն երեւակայական է: Անօթութիւնն ո՞ւր կ'զգայ մարդ: Հարցուցէք աջ ու ձախ: Մէկն իր կոկորդը ցոյց կուտայ, միւսը՝ փորը, սա՛ իր կուրծքը կը ցուցնէ եւ նա՛ ծոծրակը: Ընդհանուր կերպով խօսելով, անօթութեան զգայնութիւնը միօրինակ չէ: Ուրիշ հետաքրքրական երեւոյթ մ'է անօթութեան պարբերական հանգամանքը: Ամէն մարդ կրնայ հաստատել ասիկա: Ծաշելու ժամն եկած է: Անօթի էք: Բայց ստիպողական գործ մը կ'ունենաք եւ չէք կրնար սեղան նստիլ: Ծաշը մէկ երկու ժամ կը յապաղի. եւ ահա անօթութիւննիդ անցած է: Սովորական ժամուն, այդ զգայնութիւնը շեշտուած էր, բայց տակաւ կը մարի եւ սեղան կը նստիք առանց ախորժակի: Անդօնիօ Վիդէրպօ փորձեր կատարած է կենդանիներու վրայ որք քանի մը օր անօթի պահուելէ հետքը, հազիւ փափաք ունեցած են իրենց տրուած ուտելիքին դաշելու: Ուրիշ շահեկան փորձ մ'ալ պատմենք: Մահապարտ մը, իր պատիժէն ազատելու համար, ուզեց անօթի մեռցընել ինքզինք: Իր վիճկակին եւ զգայնութեանց վրայ նօթեր առաւ որք պահուած են: Վեց օր տեւող առաջին ծոմապահութենէ հետքը, մահապարտն երկրորդ ծոմապահութեան մը սկսաւ: Դեկտ. 2ին ճաշած էր « ախորժով », ինչպէս կը գրէ ինք: Դեկտ. 3էն սկսաւ այլ եւս բան մը չուտել: Աւասիկ այս մասին իր նօթերը: — « 3. — Սնունդ չառի: Նեղութիւն մը չեմ զգար: Ստամոքսս հանդիստ է, գլուխս թեթեւ, երեւակայութիւնս վառվռուն եւ տեսողութիւնս յստակ: Խմելու եւ ուտելու փափաք չունիմ բնաւ »: Սակայն ծարաւն զգալի կ'ըլլայ 6ին. 7ին եւ 8ին: 6ին կը գրէ. — « Բերանս ու կոկորդս չորցած են »: Հետեւեալ օր այսպէս կը շարունակէ, « — Սոսկալի ծարաւ մը կ'զգամ որ ժամ 9ին նուազեցաւ բայց հինգ ժամ ետը սաստկացաւ »: Դեկտ. 9ին ալ ծարաւէ կը նեղուէի, բայց ստամոքսս լաւ վիճակի մէջ է, տեսողութիւնս ու լսողութիւնս պայծառ են: Անօթութիւն չզգար: 10ին կը գրէ. « — Ախորժակ չունիմ »: 11ին « — Անօթութիւնս

բոլորովին դադարած է։ Ոյժերս կը նուազին զգալապէս։ Սոսկալի ծարաւ մը կ'զգամ։ Ուտելու փափաք չունիմ»։ Մինչեւ 18՝ նոյն վիճակը. — սոսկալի ծարաւ մը, բայց ո՛չ անօթութիւն։ Իրիկուան դէմ կը փոխուի։ « — Անօթի չեմ։ Ծարաւս ալ դադարեցաւ բոլորովին։ Այն քանի մը վայկեանները, որք կը միան ինծի ապրելու, կը սահին հեշտիւ, ինչպէս առուակի մը ջուրը՝ գեղեցիկ մարգագետնի մը մէջէն»։ Դատապարտեալը կը մեռնի Դեկտ. 20ին, 17 օր շարունակ առանց ուտելու եւ խմելու անցընելէ ետքը։

Անօթութիւնը կրնայ ջլախտ մ'ըլլալ։ Պատրանքներ ունի։ Մարդ անօթի կ'զգայ ինքզինք, բայց երբ ուտելիք մը կ'տեսնէ, չուզեր բերանը դնել։ Ծայրայեղ անօթութիւններ ալ կան որոց չի կրնար համապատասխանել մարմնոյն իրական մէկ պէտքը։ Անկուշտը պէտք եղածէն աւելի կ'ուտէ։ Մէյ մ'ալ շատակերը կայ որ սնունդի տարապայման քանակութեան մը պէտք ունի կշտանալու համար։ Իմացե՞ր էք Դաւարին պատմութիւնը։ Ասիկա, 17 տարեկանին, 50 քիլօ կը կշռէր եւ 24 ժամուան մէջ իր ծանրութեան հաւասար քանակութեամբ եզան միս կ'ուտէր, « փա՛ռք քեզ, Աստուած » ըսելու համար։ Քանի մը սարի ետքը պարտաւորեցաւ 6-7 մարդու կերածին չափ միայն ուտել։ Ասոր համար այնքան տկարացաւ որ հիւանդանոց դրին։ Իր ուտելիքը քառապատկուեցաւ, բայց նորէն չբաւեց։ Սկսաւ հիւանդանոցին շուններն ու կատուներն ուտել հում հում, նոյն խկ ողջ ողջ։ Յետոյ սկսաւ հիւանդանոցին մէջ մեռնողներուն դիակները լափել . . . : Մարդկային սեռին այն հետաքրքրական նմոյշը փորհաթութեան հետեւանքով մեռաւ, գարշելի հոտ մը արտադրելով։

Յղի կիները շատ անգամ ածուխ, գած, մոխիր ևն. կ'ուտեն։ Արդ, այս նիւթերը սննդարար չեն։ Կազմաւորութիւնը պէտք չունի անոնց։ Ըսել է անօթութիւնը ջլախտային բան մ'է հոս։ Շատեր անախորժութեան կ'ենթարկուին եւ անօթութիւն չեն ըզգար բնաւ։ Անախորժութիւնը երբեմն առաջին ախտանիշն է հիւանդութեան մը, որ տակաւին երեւան ելած չէ։ Յիմարներէն շատերն ախորժակ չեն ունենար։ Տակաւին յայտնի չէ թէ անօթութեան պէտքը կամ զգայնութիւնը ինչո՞ւ կ'անհետանայ։

ՎԱՅՐԵՆԻ ՄԸՆ Ե ԱՐԴԵՐ

Քաղաքակրթեալ մարդը՝ հինգ հազար տարիներու փորձուած դաստիարակութեան արդիւնքն է :

Քիիվիէ

Մէկ երկու տարի առաջ ժընէվի Համալսարանին մարդագրանական ճիւղին հմուտ ուսուցչապետը Տօքթ. Լասքօվսքի, անդամական դասի մը միջոցին յայտնեց թէ մազերու անհամեմատ երկարութեան եւ առատութեան կենդանի օրինակ մը պիտի ներկայացնէ աշակերտներուն. այդ անհասարակ, աւելցուց ուսուցչապետը ամբողջովին զուրկ է իմացականութենէ եւ ճայնական գործարանէն, թէ եւ վրայէն այնքան ապուշ չերեւիր :



Որոշուած օրը, ամփիթատրոնին մէջպեղը՝ շարժական ամփոռի մը վրայ, Տօքթ. Լասքօվսքի ղետեղեց իր մարդը որ՝ վայրի կենդանիներ ցուցնողի մը կը պատկանէր : Ռամա Սամա — այս է հրէշ մարդուն անունը — յիտուն տարեկանի մօտ է ու արջու մը պէս ամբողջ մարմինը մազերով ծածկուած, մանաւանդ կոնական ու սրունքներուն վրայ, ուր մազին երկայնութիւնը 20 սանդիմէթր է : Գլխուն մազերը կէս մէթրի կը հասնին, իսկ ղէմքը բոլորովին անյայտացած է սեւ մուշտակի մը խիտ թելերուն տակ : Զարմանալի դիտողութիւն մը՝ ոչ նրբանները, ո՛չ ալ ամբողջութեամբ մազի հետք մը չկայ :



Ռամա-Սամաի ակռաները կանոնաւոր են ու ամբողջ. ասիկա ալ հետաքրքրաշարժ կէտ մըն է, ինչու որ մինչեւ հիմայ գիտուններու զննած բոլոր մազոտ մարդիկը՝ առանց բացառութեան անկանոն ատամնաշարում մը ունեցած էին : Ոմանք կրծող ակռա-


ներ միայն ունէին իսկ ուրիշներ կրկին չարքով կգակ մը կը կրէին:

Բրօֆ. Լասքովսքի հաստատեց որ Ռամա-Սամաի ջղային դըրութիւնը անեղծ է, թէեւ ան բնաւ ինքնակամ չարժում մը չէր ըներ: Միայն՝ բանէ մը վախնալուն կոկորդայիւ աղաղակներ արձակելով կը փախչէր: Տուրտը բնաւ չէր գգար:

Զգայարանքները ամբողջ էին, սակայն գգայնութիւնը կորսնցուցած՝ տեսակ մը ընթարմութեան, քունի մէջ կ'ապրէր՝ անտարբեր շուրջը անցած դարձածին:

Մեծանուն դասապետը՝ ենթադրութիւն մը կ'ընէ թէ գուցէ այս արարածը սկզբնական մարդուն մէկ նմոյշն է որ մինչեւ մեր օրերը պահուած է Հիմալայի — ըսի՞նք թէ Ռամա-Սամա Հիմալայի կողերը ծածկող անտառներէն բռնուած է — խաւարին մէջ:

Միս Աննա Ջօն, մօրուսանոր կինը, հազիւ 27 տարեկան է, սակայն մազոտ մարդուն պէս վայրենի չէ, որովհետեւ հիմայ իր երրորդ ամուսինէն այրի մնացած է: Եւ երկար մօրութիւն հետ միասին մէկ միլիոնի հարստութիւն մըն ալ ունի:



ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ԿՌՓԱՄԱՐՏ ԱԴԵՎԱԶԸ

Ամէնքս ալ գիտենք թէ ելեքտրական ճօճանակը կը բաղկանայ ապակիէ ոտքէ մը մետաքսեայ թելով կախուած թանթրուենիի (միւրվէր) գնդիկէ մը: Երբ ելեքտրացած մարմին մը մօտեցնենք այդ գործիքին, թանթրուենիէ գնդակը կը քաշուի դէպ ի այդ մարմինը եւ անոր դպչելէն անմիջապէս ետքը ետ կը քաշուի:

Այս փորձին զուարճալի երեւոյթ մը տալու համար հետեւեալ կերպիւ ըրէք :

Այցետոմսի մը վրայ գծեցէք եւ ապա կտրեցէք կռփամարտիկի մը պատկերը : Մէկ կողմը փակցուցէք անագէ խիստ նուրբ թերթիկ մը (չօքօլաներու վրայ կը փաթթեն) եւ եզերքները լայն ձգելով խաւաքարտին միւս կողմը ծալեցէք : Ետեւի ոտքէն երկաթի թել մը կապելով կնքամոմով սեղանին վրայ հաստատեցէք, առջեւի ոտքը օդին մէջ կը մնայ առանց տեղ մը դաչելու : ասանկով խաւաքարտէ մարդը կղզիացած կ'ըլլայ : Բարակ թուղթի մը վրայ կռփամարտ ագեւազ մը կտրեցէք եւ անագէ թերթիկ մը փակցունելով՝ սեղանին վրայ խօթուած երկաթէ թելէ մը վուշէ (քէթէն) թելիկով կախեցէք՝ կռփամարտիկ մարդուն դէմ, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ :

Կը մնայ հիմա ելեքտրական մեքենայ մը հնարել : Առէք լամբարի ապակեայ երկայն շիշ մը, մէկ ծայրը խոշոր խիցով մը գոցեցէք եւ անոր մէջէն անցուցէք գամ մը : այս գամը կապեցէք կռփամարտիկին՝ սեղանին վրայ հաստատուած ոտքին : Երբ կրակին վրայ լաւ չորցած մետաքսէ դիպակով մը շփենք ապակին՝ կ'ելեքտրականայ եւ ելեքտրականութիւնը կը հաղորդուի թղթէ մարդուն : ագեւազը դէպի կռփամարդը պիտի քաշուի եւ պիտի գայ ուժով մը անոր զարնելու եւ անմիջապէս ետ պիտի մղուի՝ ինքն ալ ելեքտրականալով : Այսպէս շարունակաբար կենդանին պիտի քաշուի եւ ետ մղուի թղթէ մարդու պատկերէն՝ կատաղութեամբ իր օրսին վրայ յարձակող կենդանիի մը երեւոյթն ընծայելով : — Եթէ ապակեայ շիշը պարզ ապակիէ ըլլալու տեղ բիւրեղեայ ըլլայ, փորձը աւելի յաջող կը կատարուի :

ԱՌԵՂԾՈՒԱԾԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԸ

Գուցէ մեր ընթերցողները կարծեն թէ Եօթնագլուխ վիշապ մը կամ առասպելական կենդանի մը կը ներկայացնէ մեր պատկերը :

Պզտիկ աշխատութիւն մը պիտի բաւէ յայտնելու համար թէ այդ առեղծուած կենդանին ամէնուն ճանչցած մէկ կենդանին է, որու կոչտ խաղերը այնքան



հաճոյք կը պատճառեն մեզ : — Մեր ընթերցողներուն կը մնայ ուրեմն այս պատկերը երեք մասերու բաժնելով իրարու քով այնպէս մը շարել որ կենդանին երեւան ելլէ :

ԱՌԱՄՆԵՐ

— Տղու մը քեզի բարեւելու կերպէն կրնաս իմանալ թէ որչափ կը սիրէ ան քեզ :

— Աւելի տղայոց խօսքերուն ուշ կը դնենք մենք՝ քան թէ անոնց լռութեանը : Սակայն տղայք կը լռեն ամէնէն ուսելի հարկաւոր բաները՝ թէ չար բան մը ըլլայ ան կամ բարի, երկշոտութեան պատճառաւ, եւ կամ վայելուչ կերպով բացատրել չկարենալնուն համար :

— Վայ ան դաստիարակին կամ տնօրէնին որ չգիտեր գուշակել աշակերտի մը յարատեւ լռութեան պատճառը :

— Մարդուն սիրտը չտանիր լաւաբարոյ տղայ մը լացնել տալ, բայց զայն խնդացնելը շատ անգամ աւելի մեծ յանցանք է :

— Նայէ որ տղայներու ծիծաղը ոչ զսպես, ոչ աւելցնես, ան ինքնիրէն կը դադրի :

— Տղայոց լացը շատ քիչ անգամ զղջման նշան է : Տղաք զուարթ են բայց ոչ ծաղրածու, եւ եթէ այդ բնութիւնն ալ կ'ստանան, յանցանքը դաստիարակներունն է :

— Աղէկ նշան է երբոր տղայք, առանց շատ յանդիմանութիւններու իրենք իրենցմէ ճանչնան իրենց պակասութիւնը :

— Աշակերտիդ թերութիւններուն վրայ տհաճութիւն ցուցուր բայց ոչ բարկութիւն : Քայն ատեն կ'ամչնայ ան ըրածին վրայ առանց զայրանալու :

— Ազդարարութիւններդ աւելի իբրեւ մրցանակ քան թէ իբրեւ պատիժ ըրէ տղայոց :

— Խիստ խօսքէ մը յետոյ սիրալիր խօսք մը աւելցնելը աւելի օգտակար է քան նոյն իսկ յանդիմանութիւնը կամ շարունակեալ քաղցրութիւնը :

— Սիրտ մը անարատ պահելու միակ միջոցն է չափ դնել փափաքներուն :

— Ո՛րչափ անգամ վայրկեանական հաճոյքի մը համար մարդիկ կը վատնեն այնչափ բաներ որով հարիւրաւոր աղքատներ կրնային թշուառութենէ ազատիլ :

— Շատ քիչ բան պէտք է սնունդի, բնակութեան և հագուստի համար : Անկէ աւելին կը ցանկայ ունենալ մարդ՝ ուրիշներու ախորժակին համաձայնելու կամ անոնց աչքին հաճելի երեւնալու համար :



ՍԳԱԼԻ ՄԱՀ

ՏԻԿԻՆ ՎԵՐԺԻՆ ՊԱՏՐԻԿ ԷՖ. ԿԻԼՊԵՆԿԵԱՆԻ

Բաղդին անգութ քմահաճոյքը խլեց կորզեց Մանուկեան-Կիւլպէնկեան գերդաստաններուն Հարսը: Ամբողջ Պոլիս, ամէն Հայ զգաց իր սրտէն բան մը կը խլուի՝ երբ իմացաւ մահը Կողակցին անոր՝ որ զաւկէ զաւակ, սերունդէ սերունդ շէնցուց՝ զարդարեց համայնքին Տունը, և որու տունը, սակայն ամայացաւ: Հիւանդանոցը՝ մեր ամէն Հայերուն Տունը՝ իր ծոցին մէջ կը կրէ իր Հուրին: Կիւլպէնկեան տունը կը կորսնցնէ իր Հոգին:

Սարսառութիւն լուրը թէ Տիկին Կիւլպէնկեան անողոք հիւանդութեան ձեռքին տակ կը հեծէ, հեծեցնել տուաւ սիրտերը բոլոր համայնքին, ամէն դասակարգերուն, բոլոր անհատներուն: Մահուան գոյժը ողբացեալ Տիկինին սուգի մէջ թաղեց ամէն Պոլսեցին:

Կիւլպէնկեան Էֆէնտի անհատական ու ընկերական, պաշտօնական ու գործառնական դիրքին չափ մեծ՝ իր Գերդաստանին յատկանիչն եղող Բարերարի համբաւը՝ յուղարկաւորութեան հանդէսին հաւաքեց, Գատը Գիւղի եկեղեցիին մէջ՝ Կիրակի օր, ահագին բազմութիւն մը որու նմանը սգակիր հանդէսներու մէջ չտեսնուիր բնաւ:

Երկուշաբթի օր մասնաւոր կառախումբ մը Ետի Գուլէի Հայոց Հիւանդանոցը փոխադրեց Ողբացեալ Հանգուցելոյն մարմինը՝ որ ամփոփուեցաւ Կիւլպէնկեան գերդաստանի յատուկ դամբանարանին մէջ:

Սրտազգած ցաւակցութենէ մը աւելի ի՛նչ կարելի է արտայայտել Կիւլպէնկեան-Մանուկեան Գերդաստաններուն:

ԽՄԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իզտամ լրագրին դէմ

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

1848

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր առիժն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթակոն 20-24 էջէ բաղկացեալ. եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ.

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 զրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 տետր զան առնել մզողը պէտք է վնարէ 12 զրուշ:

Ֆուանսերէն Սորուիլ Ուզողներուն

Ֆուանսերէն լեզուն հիմնական կերպով, դիւրութեամբ եւ կարճ ժամանակի մէջ՝ առանց ուսուցչի՝ սորվիլ փափաքողներուն կը յանձնարարենք Կ. Ս. Տէմիրեան էֆէնտիի

Մ Ե Ն Տ Ո Ր Մ Ա Ն Կ Ա Ն Ց

Կ Ա Մ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ

Որ՝ լոյս տեսաւ մեր տպարանէն մաքուր և խնամեալ տպագրութիւնով:

1. Մենսոր Մանկանց, Առաջին գիրք. Քերական եւ զրուցատրական վաժութիւններ, բոլորովին նոր մէթոտով, գին 2 զրշ:

2. Մենսոր Մանկանց, երկրորդ գիրք. զրուցատրական վաժութիւններ, Ֆրանս. և Հայ եւ փոխադարձ թարգմանութիւններ, քերականական նախնական ծանոթութիւններ, Գին 4 զրշ:

3. Մենսոր Մանկանց. Երրորդ գիրք. հաւաքածոյ աշխարհագրական, թուարանական, իրագիտական, պատմական, կրօնական և բարոյագիտական խտացեալ եւ ճոխ դասերու, վայելչախօսական եւ քերականական ամէնէն գործածական կանոններով եւ հըրահանգներով սարքուած եւ համաձայն Ուսումն. ինտէլիգենտի կըրթական Մրագրին: Մամուլ տակ: Գին 6 զրշ:

Մեծ. Հեղինակին սոյն երկասիրութիւնները արգարեւ նորութիւն մըն են եւ բազմաթիւ Ուսուցիչներու կողմէ արժանապէս գնահատուած:

Յանձնարարութեան համար գիմել Պէրպէրեան տպարան, Կ. Պոլի, Պապ Ալի ճատոէսի, թիւ 38. և Հեղինակին հասցէին՝ Կէտիկ փաշա, Մեսրոպեան վարժարան:

Հատը 30 փարայ